ԳՆՈՒՄՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ք. Երևան 17.08.2016թ.

ՈՐՈՇՈՒՄ

ԳԲԽ-80/16 բողոքը քննող հանձնաժողովի

ԳԲԽ-80/16 բողոքը քննող հանձնաժողովը, գործելով ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի անունից, քննելով «Խաչպար» ՍՊԸ-ի 2016 թվականի հուլիսի 29-ի բողոքով ԳԲԽ-80/16 բողոքը քննող հանձնաժողովին ներկայացրած միջնորդությունը և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 48-րդ հոդվածի 6-րդ մասի 1-ին կետի և 49-րդ հոդվածի 1-ին մասի պահանջներով.

ՈՐՈՇԵՑ

«Խաչպար» ՍՊԸ-ի 29.07.2016թ. բողոքով ԳԲԽ-80/16 բողոքը քննող հանձնաժողովին ներկայացրած՝ «Նորք-Մարաշ» ԲԿ ՓԲԸ-ի կողմից կազմակերպված «ՆՄԲԿ-ՇՀԱՊՁԲ-16/18» (այսուհետ՝ Ընթացակարգ) ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի կողմերի միջև պայմանագրի կնքման գործընթացը՝ թիվ 2, 50, 51, 52 և 53-րդ չափաբաժինների մասով, կասեցնելու վերաբերյալ ժամանակավոր միջոց կիրառելու միջնորդությունը բավարարել:

Բողոքը քննող հանձնաժողովի՝

Անդամներ՝ **Լիդիա Պողոսյան**

Կարապետ Խարբերդյան